ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑՈՒ ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Արաբական Միացյալ Հանրապետության (Եգիպտոսի) այժմյան մայրաքաղաքին կից Հին Կահիրեում կանգուն մնացած հռոմեական ամրոցի՝ Բաբելոնի շրջակայքում գտնվող Կոպտական (Ղպտի) թանգարանում, միջնադարյան մի քանի եկեղեցիներում և վանքերում են պահվում նկարիչ Հովհաննես Երուսաղեմացու[1] բազմաթիվ սրբանկարները։ Արվեստագետը ծնվել է Երուսաղեմում և շուրջ չորս տասնամյակ ստեղծագործել Եգիպտոսում՝ կոպտական եկեղեցու պատվերով։ XVIII դարի նկարիչ է նա։ Իմացել է իր մայրենի լեզուն, թեև նկարներից շատերի տակ ստորագրությունը թողել է արաբերեն միայն՝ Հաննա էլ-Արմանի էլ-Կուտսի, այսինքն Հովհաննես հայազգի Երուսաղեմացի ձևով։ Հոր անունը եղել է Կարապետ։

1948 թ. ամռանը մենք երկար որոնումներ կատարեցինք Հին Կահիրեի կոպտական եկեղեցիներում և վանքերում, ինչպես նաև Կոպտական թանգարանում՝ Հովհաննես Երուսաղեմացու նկարների ամբողջական ցուցակը ձեռք բերելու համար։ Մեզ վիճակվեց անձամբ տեսնել, չափագրել, մանրամասն նկարագրել նկարչի 324 սրբապատկերները, որոնք ներկայումս գտնվում են այդ թանգարանում, երկու վանքերում և ութ եկեղեցիներում։ Այս նկարների ընդհանուր նկարագրությունը, ինչպես նաև դրանց ֆոտոպատճենների հրատարակությունը թողնելով ապագային, այժմ տրվում է դրանց ցուցակը ամփոփ տվյալներով, տալով նկարի անունն ու թվականը, չափսերը և ստորագրությունը միայն։ Պետք է անմիջապես ասել, որ այս թվով չի սահմանափակվում Հովհաննեսի նկարների ամբողջական ցուցակը։ Այդ անելու համար հարկավոր է դեռ մանրազնին որոնումներ կատարել նաև Եգիպտոսի կոպտական միջնադարյան այլ աղոթավայրերում և նույնիսկ Երուսաղեմ քաղաքում։ Ցավալի է ասել, որ հրդեհի և այլ աղետների պատճառով, անցնող երկու դարերի ընթացքում, անհետ կորել են հայ նկարչի բազմաթիվ ստեղծագործությունները, որոնց մասին մենք այլևս անկարող ենք որևէ գաղափար կազմել։

Ստորև տրված 324 սրբանկարների ցուցակը կազմում է Երուսաղեմացու հարուստ ժառանգության մի մասը միայն, այն մասը, որ ծանոթ է մեզ այժմ։ Այս առթիվ ուզում ենք անել հետևյալ նշումները, ցուցակն ավելի հասկանալի դարձնելու համար։

1. Նկարների անուններն առնված են գլխավորապես կոպտական արվեստի մասնագետ և այդ թանգարանի հիմնադիր Մարկոս Սիմայկա փաշայի 1937 թ. հրատարակած Կոպտական թանգարանի ֆրանսերեն կատալոգից։ Թերի և վիճելի անուններն էլ ճշգրտված և ամբողջացված են կոպտ բանասեր, հիշյալ թանգարանի գրադարանի և ձեռագրատան վարիչ Յասա Աբդել-Մեսիհի հետ։

2. Բոլոր նկարներն ունեն իրենց շրջանակները՝ հին կամ նոր, հաստ կամ բարակ։ Տրված չափսերը ցույց են տալիս միայն նկարի կտավի չափսերը, առանց շրջանակը նկատի առնելու։ Ի դեպ պետք է ասել, որ նկարիչ Հովհաննեսի շրջանակները տարբերվում են մյուս շրջանակներից, մի բան, որ երբեմն մեզ օգնում է կողմնորոշվելու Երուսաղեմացու նկարներն այլ նկարիչների գործերից ջոկելու ժամանակ։

3. Խնդրո առարկա կոպտական աղոթավայրերում Հովհաննեսի նկարներից բացի կան նաև կոպտ և օտարազգի այլ նկարիչների բազմաթիվ սրբապատկերները։ Ջանք է թափված այդ բոլորի միջից ջոկելու Երուսաղեմացու նկարները, որոնք տրվում են ստորև։

4. Հովհաննեսի նկարների մի մասը ստորագրություն ունի, իսկ մի մասն էլ անստորագիր է։ Ստորագրություն ունեցող բոլոր նկարների դիմաց նկարչի անունը մեր ցուցակում գրված է մեծատառով, իսկ փոքրատառով գրված է այն ժամանակ, երբ թեև նկարն անստորագիր է, սակայն անվիճելի կերպով Հովհաննեսի վրձնին է պատկանում։ Այսպես, օրինակ, Հովհաննեսն ունի բազմաթիվ նկարաշարքեր, նվիրված զանազան սրբերի կամ անձնավորությունների, յուրաքանչյուրը 7—21 նկարներից բաղկացած։ Շատ անգամ նկարաշարքն ավարտելուց հետո նկարիչն իր անունն ու թվականը գրել է մի նկարի տակ միայն, որից շատ պարզ հասկացվում է, որ մնացած նկարներն էլ անվիճելի կերպով պատկանում են Հովհաննեսին։ Նկարաշարքը կամ նկարներից մի քանիսը միասնաբար նկարված

---

[1] Հովհաննես Երուսաղեմացու մասին մեր հոդվածը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3։



Նկ. 1—2[illegible] դ. Կույսի եկեղեցի (Էլ-Ադարա)։ Միքայել հրեշտակապետը

են հաճախ նույն տախտակի վրա։ Ույն ցուցակում նկարների անվան դիմաց կետ-կետ է դրված այն դեպքում միայն, երբ ոչ ստորագրություն կա և ոչ էլ որևէ նկարաշարքի է պատկանում։ Սակայն նկատի առնելով Հովհաննեսի ոճն ու արվեստը, նույն դույներն ու շրջանակը և այլ հանգամանքներ, մենք կարծում ենք, որ կետ-կետ նշանակված նկարներն էլ պատկանում են Հովհաննեսի բեղմնավոր վրձնին։

5. Նշված են նկարչի այն անունները (Հաննա կամ Յուհաննա), որոնք ստորագրված են նրա նկարների վրա։

6. Հովհաննեսի առանձին նկարած նկարներից բացի ցուցակում նշված են նաև այն բոլոր ժանոթ նկարները, որոնք նա նկարել է իր կոպտ ընկերոջ՝ Իբրահիմ էլ-Նասիխի հետ 1745—1755 թթ.։

7. Նկարի վրա թվականը չլինելու կամ անընթեռնելի լինելու դեպքում թվականի տեղը բաց է թողնված։ Երբեմն պատահում է, որ նկարի թվականը մնացել է շրջանակի կամ դրա կավի տակ, որի պատճառով չի կարդացվում։ Ճշգրիտ թվականը տրվում է այն ժամանակ, երբ նկարում կա դրված։ Թվականն առնված է փակագծում, երբ տվյալ նկարը պատկանում է մի նկարաշարքի, որի նկարներից մեկի վրա կա հիշյալ թվականը, ուստի և ենթադրվում է, որ նկարաշարքի մնացյալ պատկերներն էլ պետք է կատարված լինեն այդ թվականին։

8. Հովհաննեսը նկարների վրա թողել է երեք տեսակի թվականներ, այսպես արաբական (հիջրայի), կոպտական (մարտիրոսաց) և հայկական թվականները։ Երբեք չի օգտագործել քրիստոնեական տարեթիվը։ Որպեսզի միօրինակություն ստեղծվի, այդ բոլորը մենք փոխել ենք մեր թվադրության և տվել այդպես։

9. Կոպտերի տարեթիվը հիմք ընդունելով արեգակնային տարին և վրան էլ գումարելով 284, ստացվում է քրիստոնեական ճիշտ տարեթիվը։ Գալով արաբական թվականին, սա հիմք է ընդունում լուսնային տարին, որով 11 օրվա տարբերություն ունենալով արեգակնային տարուց, որոշ տարբերություն է տալիս և չի համընկնում քրիստոնեական տարեթվին։ Այսպես, օրինակ, հիջրայի 1197 թ. համապատասխանում է մեր 1782—3 թթ., որով մենք միշտ տալիս ենք զույգ տարեթվերը, թեև նկարը կարող է կա՛մ 1782 և կա՛մ 1783 տարեթվին նկարված լինել։ Իսկ այն դեպքում, երբ նկարում տրված են միաանարար կոպտական և արաբական թվականները, այն ժամանակ մենք էլ ցուցակում տալիս ենք նկարի ճշգրիտ տարեթիվը։

ՅՈՒՅԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԿԱՐՉԻ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ

Նկարի անունը կամ սյուժեն	Չափերը սմ-ով	թվական	ստորագրութ. լայն.	երկար.
Ա. Ս. ԿՈՒՅՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ (էլ-Մոալլաֆա կոչեցյալ)				
Ս. Հովհաննեսի կյանքի դրվագներից մի նկարաշարք (7 պատկեր)				
1. Հրեշտակի ավետումը Զաքարիային՝ Ս. Հովհաննեսի ծննդյան մասին (մոտ.)	50×67	(1777)	(Հաննա)	
2. Կույսի այցելությունը Եղիսաբեթին (մոտ.)	50×67	(1777)	(Հաննա)	
3. Ս. Հովհաննեսի ծնունդը »	50×67	(1777)	(Հաննա)	
4. Նրա քարոզը[2] »	50×67	(1777)	(ՀԱՆՆԱ)	
5. Քրիստոսի մկրտությունը »	50×67	(1777)	(Հաննա)	
6. Հերովդիադայի պարը »	50×67	(1777)	(Հաննա)	
7. Ս. Հովհաննեսի գլուխը »	50×67	(1777)	(Հաննա)	
Մի ուրիշ նկարաշարք 7 պատկերների				
8. Ս. Պողոս	52×130	1778/9	ՀԱՆՆԱ	
9. Միքայել հրեշտակապետը	52×130	1776/7	ՀԱՆՆԱ	
10. Ս. Հովհաննես Մկրտիչ	52×130	1776/7	ՀԱՆՆԱ	
11. Քրիստոսը դահի վրա[3]	52×130	—	ՀԱՆՆԱ	
12. Կույսը	52×130	—	ՀԱՆՆԱ	
13. Գաբրիել հրեշտակապետը	52×130	1778/9	ՀԱՆՆԱ	
14. Ս. Պետրոս	52×130	1776/7	ՀԱՆՆԱ	
Ս. Գևորգի կյանքի դրվագներից մի նկարաշարք (15 պատկեր)				
15. Երիտասարդ ս. Գևորգ	28×40	(1776/7)	Հաննա	
16. Թագավորների առջև խոստովանում է իր հավատքը	28×40	(1776/7)	Հաննա	
17. Ցարշարանքների է ենթարկվում	28×40	(1776/7)	Հաննա	
18. Խոշտանգումը	28×40	(1776/7)	Հաննա	
19. Թույն է խմում	28×40	(1776/7)	Հաննա	
20. Անիվի տակ է դրվում	28×40	(1776/7)	Հաննա	
21. Ազոթում է (տանջանքի) աթոռի առջև	28×40	(1776/7)	Հաննա	
22. Կռվում է վիշապի հետ	28×40	(1776/7)	Հաննա	
23. Մերկ վիճակում	28×40	(1776/7)	Հաննա	
24. Ազոթում է բոցի առաջ	28×40	(1776/7)	Հաննա	
25. Ազոթում է մեռելների վրա	28×40	(1776/7)	Հաննա	
26. Բուժում է այրի կնոջ որդուն	28×40	(1776/7)	Հաննա	
27. Ակնապիշ Նայում է երկնքից իջնող Հիսուսին	28×40	(1776/7)	Հաննա	
28. Մասնակցում է կուռքերի կործանման (Թվին Ռմիե)	28×40	1776/7	Հաննա	
29. Մահապատժի է ենթարկվում (Ռմիե)[4]	28×40	1776/7	ՀԱՆՆԱ	

2 Այս նկարի տակ կա արաբերեն արձանագրություն, որ չկարողացանք կարդալ նկարի շատ բարձր դտնվելու և անհարմար դիրքի պատճառով։ Մ. Սիմայկա փաշան Կոպտական թանգարանի ֆրանսերեն կատալոգում (էջ 58) գրում է, որ այս նկարաշարքի բոլոր 7 պատկերները պատկանում են Հաննային և պատրաստված են 1777 թ. (Marcus Simaika Pacha. Guide sommaire du Musée Copte et des principales églises du Caire, Le Caire, 1937).

3 Թվականը մնացել է շրջանակի տակ, ուստի և հնարավոր չեղավ կարդալ։ Նկարն էլ բարձրից է կախված։

4 28 և 29 նկարների վրա տրված հայերեն տառերով թվականը (Ռմիե) ցույց է տալիս 1776 թ., իսկ 28 նկարի վրա տրվում է նաև կոպտական մարտիրոսաց թվականը (1493), որ համապատասխանում է 1777 թ.։ Սյունակում սույն նկարների դիմաց տալիս ենք այս երկու թվականները։

Մարիամ Աստվածածնի կյանքի դրվագներից մի նկարաշարք (11 պատկեր)[5]

30 Հիսուս մանուկը Կույսի գրկում	39.5×58	—	—
31. Ավետումը	30×24	—	—
32. Այցելությունը[6]	39×24	—	—
33. Ծնունդը	30×24	—	—
34. Մոգերի երկրպագությունը	27×30	—	—
35. Փախուստը Եգիպտոս	27×30	—	—
36. Կույսը Մատաթիային աղատում է բանտից	30×24	—	—
37. Կույսի մահը	39×24	—	—
38. Վերափոխումը	30×24	—	—
39. Հովակիմը և Աննան	27×30	—	—
40. Կույսի ընծայումը տաճար	27×30	—	—

Մի շրջանակում կան հետևյալ հինգ նկարները

41. Ս. Կղոգիոս[7]	57.5×86	1774	ՀԱՆՆԱ
42. Գաբրիել հրեշտակապետը	28×28	(1774)	Հաննա
43. Միքայել հրեշտակապետը	29.5×27.5	(1774)	Հաննա
44. Ս. Կույսը	29×28	(1774)	Հաննա
45. Մերկ Պարսամը	29×28	(1774)	Հաննա

Մի այլ շրջանակում կան հետևյալ հինգ նկարները

46. Ս. Վառվառա	17×23	—	—
47. Ս. Բարթուղիմեոս	21×40	—	—
48. Ս. Փիլիպպոս	21×40	—	—
49. Գաբրիել հրեշտակապետը	23.5×35.5	—	—
50. Ս. Կույսը[8]	25.5×36	—	—

Այլ նկարներ[9]

51. Ապա Իսքիրոն զինվորը	51×67	—	—
52. Ս. Ոնուփրիոս ճգնավորը	36×58	1783	—
53. Ս. Մերկեռիոս (Աբուլ-Սեյֆեյն, Երկդաշնանին)	56×87	1776	ՀԱՆՆԱ
54. Թեոդորոս զորավարը	56×87	1776	ՀԱՆՆԱ
55. Կոստանդիանոս և Հեղինե	56×87	1776	ՀԱՆՆԱ
56. Վիկտոր նահատակը	56×87	1776	ՀԱՆՆԱ
57. Հակոբ Հաշմանդամը[10]	56×87	1776	ՀԱՆՆԱ

---

5 Այս նկարաշարքի 11 պատկերները նկարված են առանձին-առանձին, ապա բոլորը միասին գրված են մի մեծ շրջանակի մեջ, որի չափերն են 102×112 սմ։

6 Նկարի վրա կան հեղինակի անունն ու թվականը, որոնք, սակայն, չկարողացանք կարդալ, որովհետև մնացել էին շրջանակի գաջի տակ։

7 Ս. Կղոդիոսի նկարն ու ոսկեգույն շրջանակը դրված են փայտերով հյուսված սրճագույն մի մեծ շրջանակում, 177×195 սմ չափսերով, որի չորս անկյուններում էլ տեղադրված են մնացած չորս փոքր նկարները։

8 Այս նկարները տեղադրված են խորանաձև մի մեծ շրջանակում, որի չափսերն են 225×200 սմ և որի կենտրոնում կա ս. Գևորգի նկարը, գործ մի օտար նկարչի։ Սույն մեծ շրջանակը տեղադրված է մի սեղանի վրա և հենած եկեղեցու հյուսիս-արևմտյան պատին, մուտքի դռան կողքին։

9 Վերոհիշյալ նկարաշարքերից բացի եկեղեցում կան նաև այլ նկարներ, որոնք տեղադրված են զանազան տեղեր։ Այս նկարները տալիս ենք վերջում միասին։

10 Այս հինգ նկարները (№ № 53—57) անտարակույս մի նկարաշարքի են պատկանում, որովհետև ունեն նույն թվականն ու չափսերը։ Ներկայումս էլ տեղադրված են կողք-կողքի, եկեղեցու հարավ-արևմտյան պատի վրա։

58. Միքայել հրեշտակապետը	51×102	1780	—
59. Հինգ նահատակները և նրանց մայրը	96×81	1776	ՀԱՆՆԱ
60. Սրբուհի Դամիանոս և 40 կույսերը	40×49	1783	—
61. Սրբուհի Դամիանոս և 40 կույսերը	92×90	1776	ՀԱՆՆԱ
62. Սրբուհի Դամիանոս և 40 կույսերը	43×61	—	ՀԱՆՆԱ
63. Խաչելությունը	43×58	—	ՀԱՆՆԱ
64. Ս. Մարկոս	45×61	1753	(Հաննա և Իբրահիմ)
65. Խաչելությունը (մոտավորապես)	92×130	1776	—
66. Խաչելությունը	42.5×52	1780	—
67. Ս. Գևորգ	62×95	1782	—

Բ. Ս. ՍԱՐԳԻՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Աբու Սարգա կոչեցյալ)

Քրիստոսի կյանքի դրվագներից մի նկարաշարք (15 պատկեր)[11]

1. Ավետումը	—×37	1780	ՀԱՆՆԱ
2. Ծնունդը	38×37	1780	Հաննա
3. Հիսուսը տաճար է մտնում	—×37	1780	Հաննա
4. Նրա մկրտությունը	—×37	1780	Հաննա
5. Կանայի հրաշքը	38×37	1780	Հաննա
6. Պայծառակերպությունը	—×37	1780	Հաննա
7. Ղազարի հարությունը	—×37	1780	Հաննա
8. Հիսուսի մուտքը Երուսաղեմ	38×37	1780	Հաննա
9. Վերջին ընթրիքը	—×37	1780	Հաննա
10. Խաչելությունը	—×37	1780	Հաննա
11. Խաչից իջնելը	38×37	1780	Հաննա
12. Դժոխք իջնելը	—×37	1780	Հաննա
13. Հիսուսի երևալը ս. Թովմասին	—×37	1780	Հաննա
14. Համբարձումը	38×37	1780	Հաննա
15. Ս. Հոգու իջնելը առաքյալների վրա	—×37	1780	Հաննա

Հիսուսը և իր առաքյալների մի նկարաշարք (13 պատկեր)[12]

16. Մի առաքյալ	24×36	—	—
17. Մի առաքյալ	24×36	—	—
18. Մի առաքյալ	24×36	—	—
19. Մի առաքյալ	24×36	—	—
20. Մի առաքյալ	24×36	—	—
21. Ս. Պետրոս	24×36	—	—
22. Հիսուսը Մարիամ Աստվածածնի դրկում	32×36	—	—
23. Մի առաքյալ	24×36	—	—
24. Մի առաքյալ	24×36	—	—
25. Մի առաքյալ	24×36	—	—
26. Մի առաքյալ	24×36	—	—
27. Մի առաքյալ	24×36	—	—
28. Մի առաքյալ	24×36	—	—

Այլ նկարներ

29. Խաչյալ Հիսուսը Կույսի դրկում	23×31	—	—
30. Ս. Գևորգ	27×37	—	—

[11] № № 1—15-ում նշանակված նկարների լայնությունը տարբերում է 36—38 սմ-ի միջև։

[12] Այս 13 նկարներն առանձին-առանձին են նկարված և հետո բոլորը միացված են կողք-կողքի։ Ընդհանուր չափսերն են 365×48 սմ։

31. Միքայել հրեշտակապետը	26×35	—	—
32. Ս. Պետրոս	67×92	—	—
33. Ս. Հովհաննես Մկրտիչ	60×82	—	—
34. Միքայել հրեշտակապետը	61×82	—	—
35. Քրիստոսը	60.5×82.5	—	—
36. Ս. Պողոս առաքյալը	61×92	—	—
37. Ս. Մատթեոս	59×81	—	—
38. Գաբրիել հրեշտակապետը	59×81	—	—
39. Ս. Հովհաննես	59×81	—	—
40. Ս. Ստեփանոս[13]	50.5×84	—	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
41. Մի հրեշտակ	—	—	—
42. Մարիամ Աստվածածին[14]	—	—	—
43. Կույսը	60×81	—	—

Գ. Ս. ԿՈՒՅՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Կասրիյաա էր-Ռիհանի էլ-Ադրա կոչեցյալ)

Հիսուսը և իր առաքյալները մի նկարաշարք (13 պատկեր)[15]

1. Ս. Մատթեոս	25×39	(1780)	—
2. Ս. Փիլիպպոս	25×39	(1780)	—
3. Մի առաքյալ	25×39	(1780)	—
4. Մի առաքյալ	25×39	(1780)	—
5. Ս. Հակոբ	25×39	(1780)	—
6. Ս. Պետրոս	25×39	(1780)	—
7. Աստվածածինը և Հիսուսը	44×39	1780	—
8. Ս. Պողոս	25×39	(1780)	—
9. Ս. Անդրեաս (Հավանաբար)	25×39	(1780)	—
10. Ս. Սիմոն Կանանացի	25×39	(1780)	—
11. Ս. Հակոբ	25×39	(1780)	—
12. Մի առաքյալ	25×39	(1780)	—
13. Ս. Թեոդորոս	25×39	(1780)	—

Այլ նկարներ

14. Մանուկ Հիսուսը Կույսի գրկում	80×91	1779/80	ՀԱՆՆԱ
15. Հիսուս	43×43	—	—
16. Արու-ֆամ գինվորը (Ս. Ֆորամոն)	54×80	1780	ՀԱՆՆԱ
17. Ս. Մինաս	54×80	1780	ՀԱՆՆԱ
18. Աբրահամ, Իսահակ և Հակոբ	62×80	1780	ՀԱՆՆԱ
19. Մերկ Պարսամը	54×80	1780	ՀԱՆՆԱ
20. Մկրտությունը	54×80	1780	ՀԱՆՆԱ
21. Միքայել հրեշտակապետը	54×102	1779	—
22. Ս. Սարափամոն	54×102	1779	—
23. Ս. Գևորգ	46.5×70	1778	ՀԱՆՆԱ
24. Ս. Մերկեռիոս (Արուլ Սեյֆեյն)	46.5×69.5	1778	ՀԱՆՆԱ
25. Նահատակ Հուստոս և նահատակ Արալի, որդի Հուստոսի	39×72	—	—
26. Մերկ Պարսամը	40×74	1782/3	—
27. Խաչելությունը	25.5×41	1783/4	—
28. Ավետումը	33×43	—	—

[13] Նկարն ունի թվական, սակայն տրված է կոպտական թվերով։

[14] Այս երկու նկարները (№ № 41 և 42) շատ բարձր տեղադրված լինելու պատճառով հնարավոր չեղավ չափերը վերցնել։

[15] Այս շարքի 13 նկարները տեղադրված են եկեղեցու կենտրոնական խորանի վերևում և բոլորը միասին ունեն 470 սմ երկարություն։

Դ. ՄԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ Ս. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔՈՒՄ

(Դեյր էլ-Ռահբաթ Մարի Գրգիս կոչեցյալ)

1. Ս. Գևորգ	40×44	—	—

Ե. Ս. ՎԱՐՎԱՌԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Սիտա Բարբարա կոչեցյալ)

Հիսուսի կյանքի դրվագներից մի նկարաշարք (16 պատկեր)

(Նկարված են շոբսական նկար շոբս տախտակների վրա)

1. Ավետումը[16]	38×43	—	—
2. Ծնունդը	38×43	—	—
3. Փրկագործությունը	38×43	—	—
4. Մկրտությունը	38×43	—	—
(այս չորս նկարները, № № 1—4, նկարված են մի կտոր տախտակի վրա 173×51 սմ չափսերով)			
5. Գալիլեում Կանայի հարսանիքը	—	—	—
6. Պայծառակերպությունը	—	—	—
7. Ղազարոսի հարությունը	—	—	—
8. Հիսուսի մուտքը Երուսաղեմ	—	—	—
(այս չորս նկարները, № № 5—8, նկարված են մի կտոր տախտակի վրա 168×51 սմ չափսերով)			
9. Վերջին ընթրիքը	—	—	—
10. Խաչելությունը	—	—	—
11. Խաչից իջնելը	—	—	—
12. Դժոխք իջնելը	—	—	—
(այս չորս նկարները, № № 9—12, նկարված են մի կտոր տախտակի վրա 168×51 սմ չափսերով)			
13. Հիսուսի երևումը ս. Մարիամին	—	—	—
14. Նրա երևումը ս. Թովմասին	—	—	—
15. Համբարձումը	—	—	—
16. Ս. Հոգու իջնելն առաքյալների վրա	—	—	—
(այս չորս նկարները, № № 13—16, նկարված են մի կտոր տախտակի վրա 173×51 սմ չափսերով)			

Մի նկարաշարք 9 պատկերների[17]

17. Մատթեոս ավետարանիչ	67×87	(1781/2)	—
18. Միքայել հրեշտակապետ	67×87	(1781/2)	—
19. Մարկոս ավետարանիչ	67×87	(1781/2)	—
20. Մարիամ Աստվածածին	67×87	1781/2	—

---

16 Այս նկարի վրա սկզբում եղել են նկարչի անունն ու թվականը, որոնք հետագայում սրբվել են և դարձել անընթեռնելի։ Անվիճելի կերպով Հովհաննեսի գործն է այս նկարաշարքը, որ նման է ս. Սարգիս եկեղեցու 15 պատկերանոց նկարաշարքին (№ № 1—15)։

17 Այս 9 նկարները տեղադրված են եկեղեցու կենտրոնական խորանի ճակատում, և բոլորը միասին ունեն 684 սմ երկարություն։

21. Հիսուս Քրիստոս	67×87	(1781/2)	—
22. Գարրիել հրեշտակապետ	67×87	(1781/2)	—
23. Հովհաննես ավետարանիչ	67×87	(1781/2)	—
24. Հովհաննես որդի Զաքարիայի	67×87	(1781/2)	—
25. Ղուկաս ավետարանիչ	67×87	(1781/2)	—

Այլ նկարներ

26. Հուլիանե	39×49	1782	—
27. Ավետումը	44×62	1782/3	—
28. Ս. Թեոդորոս (Ամիր Տաղրոս)	39×57	—	—
29. Ս. Մերկեռիոս (Արուլ Սեյֆեյն)	39×55	1782	—
30. Կոստանդիանոս և Հեղինե	38×50	—	—
31. Հիսուսը երկնքում	44×58	1775	—
32. Ս. Վաղվառա	51×82	1755	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ

Զ. Ս. ՄԵՐԿԵՌԻՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Երկդաշույնանին — Արուլ Սեյֆեյն կոչեցյալ)

Հիսուսի կյանքի դրվագներից մի նկարաշարք (21 պատկեր)[18]

1. Ավետումը	32×38	—	—
2. Ծնունդը	32×38	—	—
3. Տաճար ընծայումը	32×38	—	—
4. Փախուստը Եգիպտոս	32×38	—	—
5. Ղազարոսի հարությունը	32×38	—	—
6. Կանայի հարսանիքը	32×38	—	—
7. Մկրտությունը	32×38	—	—
8. Պայծառակերպությունը	32×38	—	—
9. Հիսուսի երևումը ս. Թովմասին	32×38	—	—
10. Նրա երևումը Մարիամ Մագթաղենացուն	32×38	—	—
11. Հարությունը	32×38	—	—
12. Խաչելությունը	32×38	—	—
13. Վերջին ընթրիքը	32×38	—	—
14. Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ	32×38	—	—
15. Քրիստոսը դահի վրա	32×38	—	—
16. Համբարձումը	32×38	—	—
17. Անդամալույծի բժշկությունը	32×38	—	—
18. Սամարացի կինը	32×38	—	—
19. Կույրի բժշկությունը	32×38	—	—
20. Հարյուրապետը	32×38	—	—
21. Հարյուրապետի աղջիկը	32×38	—	—

Ցանազան պատկերների մի նկարաշարք (20 նկար)[19]

22. Երեք մանուկները հնոցում	39/40×43/44	1777	Հաննա
23. Մովսեսը և անկիզելի մորենին	39/40×43/44	(1777)	Հաննա
24. Ս. Եղիայի համբարձումը	39/40×43/44	1777	Հաննա
25. Դավիթ թագավորը	39/40×43/44	1777	Հաննա
26. Հովնանը կետ ձկան փորից դուրս է դալիս	39/40×43/44	(1777)	ՀԱՆՆԱ

---

18 Այս 21 նկարները տեղադրված են եկեղեցու կենտրոնական խորանի վերևում, մեծ նկարների (№ № 66—76) ներքևը։

19 Այս 20 նկարները տեղադրված են եկեղեցու հարավային կողմում, մեծ նկարների (№ № 77—85) ներքևը։

27. Հակորի տեսիլքը	39/40×43/44	1777	Հաննա
28. Հրեշտակի ավետումը Զաքարիային	39/40×43/44	(1777)	Հաննա
29. Հացի և ձկան բազմացումը	39/40×43/44	(1777)	Հաննա
30. Փախուստը Եգիպտոս	39/40×43/44	1777	Հաննա
31. Այցելությունը	39/40×43/44	1777	Հաննա
32. Աստծու երևումը ս. Աբրահամին երեք մարդկանց կերպարանքով	39/40×43/44	1777	Հաննա
33. Իսահակի զոհաբերումը	39/40×43/44	(1777)	Հաննա
34. Նոյի տապանը	39/40×43/44	1777	Հաննա·
35. Փարավոնի ընկղմումը Կարմիր ծովում	39/40×43/44	1777	Հաննա
36. Սամվելն օծում է Սավուղին	39/40×43/44	(1777)	Հաննա
37. Եսայի մարգարեն	39/40×43/44	1777	Հաննա
38. Մովսեսն ստանում է տասը պատվիրանների տախտակը	39/40×43/44	1777	Հաննա
39. Ահարոնը տապանակի առաջ	39/40×43/44	(1777)	Հաննա
40. Ս. Պետրոսը քայլում է ջրի վրա	39/40×43/44	1777	Հաննա
41. Ս. Պետրոսն ստանում է բանալիները	39/40×43/44	1777	Հաննա

Հիսուսի կյանքի դրվագներից մի նկարաշարք (17 պատկեր)[20]

42. Քրիստոսի փորձությունը	39/40×43/44	—	—
43. Մանկան բժշկությունը	39/40×43/44	—	—
44. Մի ձեռքը չորացած մարդու բուժումը	39/40×43/44	—	—
45. Բորոտի բժշկությունը	39/40×43/44	—	—
46. Անդամալույծի բժշկությունը	39/40×43/44	—	—
47. Մարիամն օծում է Հիսուսի ոտքերը	39/40×43/44	—	—
48. Տիրոջ խրատը խոնարհության մասին	39/40×43/44	—	—
49. Հիսուսը բացում է կույրի աչքերը	39/40×43/44	—	—
50. Խաչելությունը	39/40×43/44	—	—
51. Այրի կնոջ նվերը, որ դրեց երկու լումա գանձանակի մեջ	39/40×43/44	—	—
52. Այսահարի բուժումը	39/40×43/44	—	—
53. Թզենին	39/40×43/44	—	—
54. Առաքյալները ձկնորսություն են անում Գենեսարեթի լճում	39/40×43/44	—	—
55. Հիսուսը առաքյալների հետ ծովում փոթորիկի միջոցին	39/40×43/44	—	—
56. Առաքյալները հասկեր են պոկում	39/40×43/44	—	—
57. Հիսուսի հագուստներին դիպչող կինը	39/40×43/44	—	—
58. Հայրոսի աղջկա հարությունը	39/40×43/44	—	—

Զանազան պատկերների մի նկարաշարք (7 նկար)[21]

59. Կանանցի կինը	39/40×43/44	(1778)	—
60. Այսահարի բժշկությունը	39/40×43/44	(1778)	—
61. Հարյուրապետը	39/40×43/44	(1778)	—
62. Կոստանդիանոս (թագավորը)	39/40×43/44	1778	—
63. Խաչի գյուտը	39/40×43/44	(1778)	—
64. Հեղինե թագուհին	39/40×43/44	1778	—
65. Առաքյալների առաքելությունը	39/40×43/44	(1778)	—

---

20 Այս 17 նկարները տեղադրված են կենտրոնական խորանի դիմացի երկրորդ ձախակողմյան սյունից դեպի երկրորդ աջակողմյան սյունը։

21 Այս 7 նկարները տեղադրված են եկեղեցու ձախակողմյան Ա սյունից դեպի Բ լայն սյունը, կողք-կողքի շարված օդում։

Ջանազան սրբերի պատկերների մի նկարաշարք (11 նկար)[22]

66. Ս. Պողոս	65×100	1752	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
67. Ս. Պետրոս	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
68. Ս. Հովհաննես ավետարանիչը	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
69. Միքայել հրեշտակապետը	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
70. Մարիամ կույսը	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
71. Հիսուս Քրիստոս	81×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
72. Հովհաննես Մկրտիչ	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
73. Գաբրիել հրեշտակապետը	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
74. Ս. Մատթեոս ավետարանիչը	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
75. Ս. Ղուկաս ավետարանիչը	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա
76. Ս. Մարկոս ավետարանիչը	65×100	(1752)	Իբրահիմ և Յուհաննա

Ջանազան սրբերի պատկերների մի նկարաշարք (9 նկար)[23]

77. Մի առաքյալ	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա
78. Մի առաքյալ	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա
79. Մի առաքյալ	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա
80. Միքայել հրեշտակապետը	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա
81. Հիսուս Քրիստոս	63×97	1747	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
82. Գաբրիել հրեշտակապետը	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա
83. Մի առաքյալ	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա
84. Մի առաքյալ	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա
85. Մի առաքյալ	63×97	(1747)	Իբրահիմ և Յուհաննա

Ջանազան սրբանկարների մի նկարաշարք (7 պատկեր)[24]

86. Հիսուս մանուկը Կույսի գրկում	39×38	(1779)	—
87. Միքայել հրեշտակապետը	39×38	(1779)	—
88. Ս. Պողոս	39×38	(1779)	—
89. Ռաֆայել հրեշտակապետը	39×38	1779	—
90. Գաբրիել հրեշտակապետը	39×38	(1779)	—
91. Ս. Պետրոս	39×38	(1779)	—
92. Սուրիել հրեշտակապետը	39×38	(1779)	—

Այլ նկարներ

93. Աբու Նաֆր (Ապա Նուֆեր) և Թեկղե Հայ-մանոտ[25]	61×93	—	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
94. Ս. Մերկեռիոս (Աբուլ Սեյֆեյն)	74×95	1772	ՀԱՆՆԱ
95. Ս. Պողոս և ս. Անտոնիոս	46×51.5	—	ՅՈՒՀԱՆՆԱ
96. Հիսուս մանուկը Կույսի գրկում	65.5×99.5	—	—
97. Միքայել հրեշտակապետը	24×42	—	—
98. Ամբա Թեկղե Հայմանոտ հարեշը	33×50.5	1759	ՀԱՆՆԱ

---

22 Այս 11 մեծ նկարները տեղադրված են կենտրոնական խորանի ճակատին գտնվող 21 փոքր նկարների (№№ 1—21) վերևում։

23 Այս 9 մեծ նկարները տեղադրված են №№ 22—41 փոքր 20 նկարների վերևում։

24 Այս 7 փոքր նկարները տեղադրված են եկեղեցու կենտրոնական խորանի հարավ-արևելյան անկյունային ծայրամասում։

25 Թվականը տրված է կոպտական թվերով

Է. Ս. ՄԵՐԿԵՌԻՈՍԻ ՎԱՆՔՈՒՄ

(Երկդաշույնանին — Աբուլ Սեյֆեյն կոչեցյալ)

1. Ս. Մերկեռիոս[26]	66.5×83	—	(Իբրահիմ և Յուհաննա)

Ը. Ս. ԿՈՒՅՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Էլ-Ադրա կամ Էլ-Դամշիրիյա կոչեցյալ)

Հիսուսի և առաքյալների պատկերների մի նկարաշարք (7 նկար)[27]

1. Երկու առաքյալներ (մոտավորապես)	58×58	—	—
2. Երկու առաքյալներ »	58×58	—	—
3. Երկու առաքյալներ »	58×58	—	—
4. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում »	58×58	—	—
5. Երկու առաքյալներ »	58×58	—	—
6. Երկու առաքյալներ »	58×58	—	—
7. Երկու առաքյալներ »	58×58	—	—

Զանազան սրբերի պատկերների մի նկարաշարք (5 նկար)[28]

8. Ռաֆայել հրեշտակապետը	40×45	(1780)	Հաննա
9. Ս. Պետրոս	40×45	(1780)	Հաննա
10. Հիսուս մանուկը Կույսի գրկում	40×46	1780	ՀԱՆՆԱ
11. Ս. Պողոս	41×46	(1780)	Հաննա
12. Սուրիել հրեշտակապետը	41×46	(1780)	Հաննա

Այլ նկարներ

13. Միքայել հրեշտակապետը	49×74	1764	ՀԱՆՆԱ
14. Գաբրիել հրեշտակապետը	48.5×67.5	1748	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
15. Միքայել հրեշտակապետը[29]	—	—	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
16. Միքայել հրեշտակապետը	45×70	—	—
17. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում	42×44	—	—
18. Ս. Գևորգ[30]	49×60	1753	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ

Թ. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Ֆում էլ-Խալիգ բաղամասում)

1. Ս. Մինաս (մոտավորապես)	60×80	—	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
2. Ս. Պողոս »	60×80	—	ՅՈՒՀԱՆՆԱ
3. Ս. Պետրոս »	60×80	—	ՅՈՒՀԱՆՆԱ
4. Հիսուս »	60×80	1772/3	ՅՈՒՀԱՆՆԱ
5. Ս. Ղուկաս »	60×80	1772/3	—
6. Ս. Հովհաննես »	60×80	1767/8	—
7. Ս. Մարկոս »	60×80	—	—
8. Ս. Մատթեոս »	60×80	—	—
9. Ս. Մերկեռիոս (Աբուլ Սեյֆեյն)	—	1745	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
10. Վիկտոր զորավարը (Մարի Բոկտոր)	—	1745	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
11. Ս. Բեհնամ (Մարի Բանայ)	—	1782	ՅՈՒՀԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏ
12. Ս. Իզիդոր և ս. Պանտելեյոն	—	1745	—

---

26 Հավանաբար սա երկու նկարիչների գործն է։ Թվականը տրված է կոպտական թվերով։

27 Այս 7 քառակուսի նկարները տեղադրված են կենտրոնական խորանի վերևում։

28 Տեղադրված են աջակողմյան փոքր խորանի վերևում։

29 Թվականը տրված է կոպտական թվերով։

30 Թվականը տրված է կոպտական թվերով։

Այս եկեղեցում Հովհաննեսը պատի վրա նկարել է կենտրոնական խորանի կողմին հետևյալ որմնանկարները.

Խորանի ձախակողմյան մասում

13. Ահարոն քահանայապետը[31]	—	(1772)	ՀԱՆՆԱ
14. Սամվել քահանայապետը և Դավթի որդին[32]	—	(1772)	Հաննա
15. Ս. Գրիգոր	—	(1772)	Հաննա

Խորանի աջակողմյան մասում

16. Սիմեոն քահանայապետը իր կրծքի վրա կրում է Հիսուսին[33]	—	1772	Հաննա
17. Եսայի մարգարեն	—	(1772)	Հաննա
18. Ս. Բարսեղ	—	(1772)	Հաննա

Ժ. Ս. ԿՈՒՅՍԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ[34]

(Էլ-Ադրա կոչեցյալ, Հարեթ Էլ-Զուելա թաղամասում)

1. Ս. Կույսը շրջապատված հրեշտակներով	—	1771	—

ԺԱ. ԿՈՊՏԱԿԱՆ ԹԱՆԴԱՐԱՆՈՒՄ

(Հին Կաիրեում)

1. Ս. Պետրոս առաքյալը (№ 4689)	57×77	—	—
2. Ս. Պողոս առաքյալը (№ 4688)	57×77	—	—
3. Քրիստոսը գահի վրա շրջապատված Հայտնության խորհրդանշական չորս կենդանիներով (№ 4548)	43×44	—	—

31 Կենտրոնական խորանի ճիշտ ձախակողմյան մասում վերևից ներքև պատի վրա կա արաբերեն մի արձանագրություն, որտեղ հիշվում են օրվա կոպտական պատրիարքի՝ Ամբա Յուաննեսի, եկեղեցու երեք քահանաների և նկարիչ Հովհաննես հայազգու անունները։ Թվական չկա։

32 Այս նկարի ներքևի կեսը չի պահպանվել։ Բաց տեղում դրված է նոր փայտի կտոր։

33 Նույն խորանի ճիշտ աջակողմյան մասում վերևից ներքև պատի վրա կա արաբերեն մի այլ արձանագրություն, որտեղ հիշվում են խորանի սեղանը և վերոհիշյալ նկարները պատրաստել տվող պատվիրատուի և իր եղբոր անունները, ինչպես նաև այդ գրության թվականը՝ 1772։ Եկեղեցու կենտրոնական խորանի երկու կողմերի արաբերեն զույգ արձանագրություններից պարզ երևում է, որ այս որմնանկարների հեղինակը Հովհաննես նկարիչն է։

34 Կոպտական այս եկեղեցին գտնվում է Կահիրեի Բեյն էլ-Սուրեն թաղի Հարեթ էլ-Զուելա փոքր և նեղլիկ փողոցում, հայկական ս. Աստվածածին եկեղեցուն շատ մոտ։ Մինչև հայկական այս եկեղեցու կառուցումը հայերը ս. Սարգիս անունով եկեղեցի են ունեցել վերոհիշյալ կոպտական եկեղեցու երկրորդ հարկում, որ հետագայում հանձնել են կոպտերին։ Այս մասը 1948 թ. օգտագործվում էր որպես վանք կոպտ կույր մայրապետների կողմից։

Այս շենքի գետնահարկը, այսինքն կոպտական եկեղեցու մասը, գտնվելով փողոցի մակերեսից մոտ հինգ մետր ցած, ամեն տարի նեղոս գետի հորդումների ժամանակ ջրով էր լցվում։ 1948 թ. ամռանը այս եկեղեցին վերանորոգվում էր և հատակն էլ ցեմենտապատվում։ Մեր այցելությունը զուգադիպեց այդ օրերին և մենք այլևս հնարավորություն չունեցանք մանրամասն գրառումներ անել եկեղեցու սրբապատկերների մասին, որովհետև դրանք հավաքված էին։ Սակայն պատերից և սյուներից կախված տեսանք Հովհաննեսի ոճին պատկանող մի շարք նկարներ, որոնցից մի քանիսը նույնիսկ կրում էին նրա ստորագրությունը։

Նույնը կարելի է ասել նաև շենքի երկրորդ հարկի մասին։ Այնտեղ էլ կային Հովհաննեսի նկարներից։ Նույնիսկ կենտրոնի պատից կախված մեծ նկարը կրում էր Հովհաննեսի ստորագրությունը։

Ներգաղթելով հայրենիք, մենք այլևս առիթ չունեցանք կրկին այցելելու այդ շենքը և ցուցակագրելու Հովհաննեսի բոլոր գործերը։ Վստահ ենք, որ այս նկարիչը մեկից ավելի նկարներ ունի այդ շենքում։ Վերևում հիշված Հովհաննեսի նկարի անունն ու թվականն էլ մենք վերցրել ենք Սիմայկա փաշայի Կոպտական թանգարանի ֆրանսերեն կատալոգից (էջ 87)։

4. Ս. Վարվառան ձեռքում բռնած է մի արմավենի (№ 3348)	16×22	—	—
5. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում (№ 3405)	33×44.5	—	—
6. Ս. Գևորգ ձիավորը կռվում է վիշապի հետ (№ 3414)	31.5×38.5	—	—
7. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում (№ 3414)	30×38.5	—	—
8. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում (№ 3404)	34×42	—	ԻԲՐԱՀԻՄ և ՀԱՆՆԱ
9. Ս. Փիլիպպոս առաքյալը (№ 3430) ձախին	28.5×41	—	—
10. Ս. Բարթուղիմեոս առաքյալը (№ 3430) աջին	28×40.5	—	—
11. Քրիստոսը գահի վրա (№ 3362)	43×61	1748	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
12. Քրիստոսը գահի վրա (№ 3374)	36×46	1777	—
13. Միքայել հրեշտակապետը (№ 3771)	53×65	1750	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
14. Ս. Մինաս նահատակ (№ 3368)	34×57	—	—
15. Ս. Բարսեղ, Կեսարիո եպիսկոպոս (№ 3415)	23.5×66	—	—
16. Ս. Պողոս և ս. Անտոնիոս (№ 3418)	46×48.5	1777	—
17. Մանուկ Հիսուսը ս. Կույսի գրկում (№ 3367)	39×54	—	—

Ն. ԼԻՔԱՅԵԼՅԱՆ

ՇԱՄՇԱԴԻՆԻ ԵՎ ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԸ

ՀՍՍՀ Շամշադինի և Կրասնոսելսկի շրջաններն ընկած են Աղստև ու Տաուշ գետերի ավազաններում, ընդ որում, նրանք արևելքից և հյուսիս-արևելքից սահմանակից են Գետաբեկին և Շամխորին, հյուսիս-արևմուտքից Ղազախի, Իջևանի և Նոյեմբերյանի շրջաններին, իսկ Կրասնոսելսկը սահմանագծվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերով։ Այդ շրջանները հնագիտական առումով ամենաքիչ ուսումնասիրված վայրերից են։

1958 թ. Նավուր գյուղում պատահականորեն գտնված երկու բրոնզե կացին հանձնվեցին Հայաստանի պատմության թանգարանին։ Քիչ ավելի ուշ պատմ. գիտ. դոկտոր Հ. Մարտիրոսյանի կողմից բերվեցին մի քանի կավանոթներ և բրոնզե զարդեր և Բերդում պատահականորեն հայտնաբերված անտիկ դրամների գանձ[1]։

Շամշադինի շրջանում հայտնաբերվեցին ութ կիկլոպյան ամրոցներ, որոնցից երեքի մասին տեղեկություններ հրապարակված են[2]։

Կրասնոսելսկի շրջանում հայտնաբերվել են վեց կիկլոպյան ամրոցներ։ Նշված շրջանների ամրոցները չափագրվել են ճարտարապետ Գ. Դանիելյանի կողմից։

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ

Տանձուտ ամրոցը գտնվում է Նավուր գյուղից հինգ կմ հարավ, բարձր ժայռաբլրի վրա (164 մ×125 մ, որը մոտ երկու հեկտար է)։ Բլուրը հարավից միանում է սարալանջին, իսկ մյուս երեք կողմերից եզրագծված է գահավեժ լանջերով։ Ամրոցը կառուցված է բլրի ուրվագծին համապատասխան և ոչ ճիշտ ձվաձև է։ Հարավային և հարավ-արևմտյան կողմերից՝ սարալանջի ուղղությամբ ամրոցը պաշտպանված է երկու շարք պարիսպներով, որոնց լայնությունը չորս մետր է։ Արևմտյան և հարավային երկրորդ շարքի պարիսպներն ունեն որմնահեցեր և ելուստներ։

Ամրոցն ունի երկու մուտք։ Հյուսիսային մուտքը գտնվում է խիստ թեք լանջի վրա և,

---

[1] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 61։

[2] Ս. Եսայան, Կ. Ղաֆադարյան, Շամշադինի մի քանի կիկլոպյան ամրոցները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1965, № 11, էջ 80։